ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4457-Ա « 31 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի Հ.427-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.21Ա ՇԵՆՔԻ Հ.50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 221.8ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Արմինե Գևորգյանի դիմումը՝ Երևանի Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին /այսուհետ նաև «Կազմակերպություն»/:

Երևան քաղաքի ավագանին 2025 թվականի հոկտեմբերի 24-ի հ.427-Ա որոշմամբ տվել է իր համաձայնությունը՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.06.2009թ. հ.2269090 վկայական), Երևանի Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող 221.8քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի նոյեմբերի 1-ը ժամկետով «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Երևանի Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող 221.8քմ մակերեսով տարածքն /այսուհետ նաև «Տարածք»/ անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի նոյեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր /այսուհետ նաև «Պայմանագիր»/՝ պայմանագրում ներառելով նաև հետևյալ կետերը.

1) հատկացված Տարածքն օգտագործել բացառապես աուտիստիկ սպեկտրի խանգարում ունեցող երեխաներին, դեռահասներին և նրանց ընտանիքի անդամներին ծառայությունների մատուցման նպատակով.

2) Տարածքում կատարել վերանորոգման աշխատանքներ /որը պետք է իրականացնել Պայմանագրից ծագող իրավունքը պետական գրանցման ենթարկելուց հետո, մեկ տարվա ընթացքում/, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում պահպանել և ապահովել Տարածքի բարեկարգ վիճակը, մաքրությունը, սանիտարական վիճակը, իրականացվող գործունեությանը համապատասխան կահավորանքը, իրականացնել ընթացիկ նորոգումը.

3) յուրաքանչյուր տարվա նոյեմբեր ամսին ներկայացնել հաշվետվություն՝ Կազմակերպության կողմից տարածքում իրականացրած գործունեության և կատարված աշխատանքների վերաբերյալ.

4) Պայմանագիրը կարող է վաղաժամ միակողմանի լուծվել պայմանագրի հիմնական պայմանները խախտելու, դրանք չկատարելու կամ ոչ ամբողջական կատարելու, կամ սահմանված ժամկետները խախտելու դեպքում:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող գույքային իրավունքի պետական գրանցման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու հետ կապված ծախսերը կատարվում են Կազմակերպության կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ